Առանձնապէս հետաքրքրական է հրամայականի մի ձեւը. ինչպէս՝ գրիս ա, խօսիս ա ևն։

4. Հաւարիկի բարբառ.— Խօսւում է Կուր գետի ձախ ափին՝ Արէշ գաւառի 6 հայաբնակ գիւղերում, որոնցից կարեւորը Հաւարիկ գիւղն է։ Այս բարբառի վրայ մանրամասն մի ուսումնասիրութիւն ունի Գր. Տէր Պողոսեան, որի մի համառօտութիւնը հրատարակուած է Հայաստանի Գիտական Ինստիտուտի Բանբեր ժողովածուի մէջ, էջ 160–177, նմոյշներով միասին։

Բարբառս շատ կէտերով նման է Ղարաբաղի, Զուղայի և Շամախու բարբառներին, բայց իր քերականական կազմութեամբ անջատւում է բոլորից։

Գլխաւոր յատկանիշներն են.

1. Սահմանական ներկայի և անկատարի երկու տեսակները, որոնք կազմում են անորոշ դերբայից. ինչպէս՝ գիրէլիս ըմ, խինդալիս ըմ, գիրէլըմ ըս, խինդալիմ ըս, գիրէլիմ ի, խինդալիմ ի ևն.— գնալս յըմ, գնալս յըս, գնալս յի ևն.— գնալըմ էյի, գնալըմ էիր, գնալս էյի, գնալս էիր եւայլն։

2. Ապառնիի համար կը ձեւը չկայ, այլ դերբայական ձեւ միայն. ինչպէս՝ գնալա յըմ, գնալա էի ևն, գնալացուկ ում, գնալացուկ էյի ևն, գլանական ըմ, գնալական էյի։

3. Ստորադասականը կազմւում է միայն անորոշով. ինչպէս՝ գնալ ըմ, գնալ ըս, գնալ էի, գնալ էիր ևն։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ս. Զատկի տօնին առթիւ հեռեւեալ շնորհաւորական հեռագիրը ստացուած է Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն, ուղղուած Գեր. Տեղապահ Հօր:

Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան
Տեղապահ Ս. Աթոռոյ
Երուսաղէմ

Սիրոյ ողջոյններով կը շնորհաւորենք մեր Փրկչին Ս. Յարութեան տօնը: Աղօթենք որ յարուցեալ Փրկիչը աշխարհին շնորհէ իր խաղաղութիւնը որ հիմն է երջմարիտ քաղաքակրթութեան եւ աղբիւր՝ մարդկային կեանքի երջանկութեան:

Սիրով եւ օրհնութեամբ
ԳԷՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց

15 Ապրիլ 1950

Իսկ 6 Ապրիլ 1950ին, Գեր. Տեղապահ Հայրը հեռեւեալ շնորհաւորական հեռագիրը ղրկած է Ամենայն Հայոց Հայրապետ Վեհ. Տ. Տ. Գեորգ Սրբազնագոյն կաթողիկոսին:

Նորին Ս. Օծութիւն Վեհ. Տ. Տ. Գէորգ
Ս. Կաթողիկոս Ամենայն Հայոց
Էջմիածին, Երեւան

Ի դիմաց Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ համայն պաղեստինահայութեան կը ներկայացնենք Ս. Զատկի տօնին առթիւ մեր բարեմաղթութիւնները, Զերդ Ս. Օծութեան երջանիկ եւ երկար կեանք եւ բարգաւաճութիւն ու հաստատութիւն մեր Ս. Եկեղեցիին, Հայրենիքին եւ մեր սիրեցեալ ժողովուրդին:

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ

digitised by A.R.A.R.@

ՀԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ

ԴԵՐ. Տ. ՏԻՐԱՆ Ս. ԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

ՄԵՐ ՄԷՋ

Ուրախութիւնը ունեցանք Ս. Զատկի տօներուն առթիւ մեր մէջ ունենալու, Ս. Աթոռոյ Միաբաններէն Հիւս. Ամերիկայի բարեջան առաջնորդ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեանը։

Դեր. Ս. Հայրը երուսաղէմ ժամանեց 31 Մարտ Ուրբաթ երեկոյ։ Մինչև երուսաղէմ քաղաքի մուտքը իրեն դիմաւորութեան գացած էին Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան, Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան և Հոգ. Տ. Դարեգին Աբեղ. Դազանճեան։

Իր երուսաղէմ անցուցած օրերուն Դեր. Սրբազանը նախագահեց Աւագ Շաբաթի մեր բոլոր հանդիսութիւններուն, հետզհետէ այցելեց Ս. Քաղաքիս զանազան պաշտօնական անձերուն, ինչպէս ցունաց և Լատինաց Ամենապատիւ Պատրիարքներուն, երուսաղէմի Աւագ Քարտուղար Վսեմ. ձէմալ Պէկ Թուքանի, Անկլիքան Եպիսկոպոսին, երուսաղէմի Վսեմ. Մութասարիֆին, Անգլիական Վսեմ. Հիւպատոսին, Բեթղեհէմի Քաղաքապետին կայլն, որոնք իրենց կարգին անձամբ կամ ներկայացուցիչներու միջոցաւ, փոխադարձեցին Ս. Հոր այցելութիւնը։

Ս. Զատկի տօնակատարութենէն ետք 11 Ապրիլ երեքշաբթի առաւօտ Դեր. Սրբազանը մեկնեցաւ դէպի Հիւս. Ամերիկա։ Ողջերթի համար մինչև երուսաղէմ քաղաքի ծայրամասը իրեն ընկերացան հոգեշնորհ վարդապետ հայրեր և բազմակամ ազգայիններ։

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

◆ 27 Մարտ Բշ. — Դեր. Տեղապահ Հայրը Երեկոյեան ընթրիքի պատուոյ սեղան տուաւ U.N.I.C.E.F.-ի Տնօրէն Պր. Hornecfer-ի, Լուսարարապետարանի յարկաբաժնին մէջ։ Սեղանին ներկայ էին նաև Հոգ. Տ. Տ. Սուրէն, Միւռոն վարդապետներ և Ս. Աթոռոյ ժողովրդային Պարենաւորման ցանձնախումբի անդամները։

◆ 1 Ապրիլ Շբ. — Յիշատակ յարութեան Ղազարու։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Ս. Պատարագի ընթացքին հաղորդուեցան Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի ուսուցչուհիներն ու աշակերտութիւնը։

Յետմիջօրէի, ժամը 2ին, նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեանի հոգեշնորհ վարդապետ հայրեր պաշտօնական թափօրով իջան Ս. Յարութեան Տաճար, «Հրաշափառ»ով մուտքի հանդիսութենէն և Քրիստոսի Ս. Դերեզմանին ուխտի արարողութենէն ետք, թափօրը բարձրացաւ մեր Բ. Գողգոթայի մատուռը, ուր տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն, նախատօնակ և ապա երեկոյեան թափօր Տնօրինական Սրբատեղիներու մէջ։ Միաբան հայրեր նախագահութեամբ Դեր. Ս. Հոր վերադարձան մայրավանք պաշտօնական թափօրով։

◆ 2 Ապրիլ Կիր. — Ծաղկազարդ. առաւօտեան պաշտօնական զոյգ թափօրներով, առաջինը նախագահութեամբ Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեանի և երկրորդը՝ նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս.ի, վարդապետ հայրեր իջան Ս. Յարութեան Տաճար։ Բ. Գողգոթայի մեր մատրան մէջ պաշտուելէ ետք առաւօտեան ժամերգութիւնը, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագը։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Դարեգին Աբեղայ Դազանճեան։ Ապա տեղի ունեցաւ Ծաղկազարդի մեծահանդէս թափօրը Քրիստոսի Ս. Դերեզմանին շուրջ։ Մեր թափօրին կը հետեւէին նաև մեզի հետեւակ Ղպտց և Ասորւոց եկեղեցական թափօրները։ Արարողութեանց աւարտին նախագահ Դեր. Սրբազանը, վարդապետ հայրեր և ժողովուրդ վերադարձան մայրավանք հանդիսական թափօրով և շարականի երգեցողութեամբ՝ սկսելով Հայկական թաղի մուտքէն մինչև պատրիարքարան, ուր Միաբանութիւն և ժողովուրդ ընդունեցին Ս. Հոր օրհնութիւնները։

Երեկոյին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր «Անդաստան», երեկոյեան ժամերգութիւն և ապա «Դռնբացէք»ի արարողութիւնը նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեանի։

◆ 4 Ապրիլ — Աւագ Երեքշաբթի։ — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին Ս. Յովհաննէս հայապատկան մատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան։ Ս. Պատարագի ընթացքին Հաղորդուեցան Ս. Թարգմանչաց Նախակրթարանի երկսեռ աշակերտութիւնը և ուսուցիչները։

◆ 5 Ապրիլ Դշ. — Յետմիջօրէի, ժամը 3.30-ին, ի դիմաց Դեր. Տեղապահ Հոր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Դարեգին Աբեղայ Դազանճեանի ներկայ գտնուեցաւ երուսաղէմի արաբական բաժնի Y. M. C. A. ընկերութեան բացման հանդէսին։

◆ 6 Ապրիլ — Աւագ Հինգշաբթի։ — Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, առաւօտեան ժամերգութենէն և «Ապաշխարողաց» կարգի կատարումէն ետք, հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց՝ եպիսկոպոսական խոյր ի գլուխ՝ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան։

Կէսօրէ վերջ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Ոտնլուայի» կարգը, հանդիսապետութեամբ Դեր. Տ. Տիրան Սրբազանի։ Մասնաւոր հրաւէրներով ներկայ էին, երուսաղէմի Աւագ Քարտուղար Վսեմ. ձէմալ Պէկ Թուքան, Անգլիացւոց Դեր. Եպիսկոպոսն ու դեսպանը, և դեսպանատան կարեւոր պաշտօնեա-

digitised by A.R.A.R.@

ները, ինչպէս նաև այլ կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներ և Միջ. Կարմիր Խաչի անդամներ ու այլ հիւրեր։

Երեկոյեան «Ոնտայուայ»ի կարգէն ետք ուխտաւորական թափօրով վարդապետ հայրեր, աշակերտներ և ժողովուրդ այցելեցին հայապատկան Ս. Հրեշտակապետաց վանքը (Աննա քահանայապետի տունը) ուր կը գտնուին, Քրիստոսի բանտն ու չարչարանաց ձիթենին որուն կապուեցաւ Յիսուս քահանայապետի տան մէջ։ Որմէ ետք Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ սկսաւ «լացի գիշեր»ուան պաշտամունքը որ տեւեց մինչև կէս գիշեր։ Քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան «Լուռ գիշեր . . . մութ գիշեր . . .» բնաբանով։

◆ 7 Ապրիլ — Աւագ Ուրբաթ. — Առաւօտուն Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաչելութեան» կարգը։

Երեկոյեան, դարձեալ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Քրիստոսի «Թաղման» կարգը, նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Սրբազանի և ի ներկայութեան խուռներամ բազմութեան։

◆ 8 Ապրիլ — Աւագ Շաբաթ. — Առաւօտեան ժամերգութենէն ետք, ժամը 10ին, վարդապետ հայրեր գլխաւորութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի իջան Ս. Յարութեան Տաճար, կատարելու համար Տաճարի դռան այդ օրուան հանդիսական բացումը։ Քիչ ետք, երկրորդ թափօր մը նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեանի, մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, որ լեցուն էր արեւելեան Հայ, Յոյն, Ղպտի և Ասորի եկեղեցիներու հետեւորդ բազմութեամբ մը։ Կէսօրուան մօտ Յունաց թափօրի աւարտին մեր լուսահանը Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան և Յունաց Պատրիարքական Տեղապահը մտան մեր Փրկչի Կնքուած Գերեզմանը։ Ու քիչ յետոյ աւանդական — Նուիրական լոյսը, որպէս նշանակ Քրիստոսի լուսափառ Յարութեան կը փողփողէր Ս. Գերեզմանի դռնէն, պատուհաններէն ու վերնատան մեր պատըշգամէն ուր կը գտնուէր Գերապատիւ հանդիսապետ Սրբազանը։ Ապա կը լուսաւորուին տաճարին մէջ խռնուած ամենազգի հաւատացեալներուն մոմի տրցակները, ստեղծելով այսպէս անօրինակ խանդ ու իրարանցում։ Անմիջապէս որ Գերապատիւ Հայ և Յոյն լուսահանները դուրս ելան Ս. Գերեզմանէն, սկսաւ օրուան մեր մեծահանդէս թափօրը նախագահութեամբ լուսահան Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, եպիսկոպոսական խոյր ի գլուխ։ Մեր թափօրին կը հետեւէին նաև մեզի հետեւակ Ղպտոց և Ասորւոց թափօրները։

Թափօրին աւարտին Գերապատիւ Նախագահ Սրբազանը, Միաբանութիւն և ժողովուրդ լուցեալ մոմերնիօք թափօրական գնացքով և շարականի երգեցողութեամբ վերադարձան մայրավանք, ուր Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Յարութեան Աւետարան»ի ընթերցումը։ — Կարճ դադարէ մը ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ս. Յարութեան «Ճրագալոյց»ի կարգը։ Ճրագալոյցի Ս. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան։ Ապա կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը, որմէ վերջ Միաբանութիւնը թափօրով բարձրացաւ վանքի սեղանատունը, կատարելու համար օրուան աւանդական սեղանօրհնէքը։

Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ եւս կատարուեցաւ «Ճրագալոյց»ի կարգ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան։

● 9 Ապրիլ Կիր. — Զատիկ Յարութեան Տեառն մերոյ. — Կէս գիշերին, նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեանի վարդապետ հայրեր, պաշտօնական թափօրով իջան Ս. Յարութեան Տաճար։ Օրուան գիշերային ժամերգութիւնը կատարուեցաւ մեր վերնատան մատրան մէջ։ Իսկ առաւօտեան ժամերգութիւնը, սկսելով «Լցաք»էն կատարուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ, մեծահանդէս թափօրով, որուն կը հետեւէին նաև մեզի հետեւակ Ղպտոց և Ասորւոց թափօրները։ Ապա մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։ Պատարագիչն էր Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեան։ Ս. Պատարագի աւարտին Դեր. Սրբազանը և հոգեշնորհ վարդապետ հայրեր պաշտօնական թափօրով և շարականի երգեցողութեամբ վերադարձան մայրավանք։

Երեկոյին տեղի ունեցաւ մեծահանդէս «Անդաստան» և թափօր Ս. Յակոբեանց մայրավանքի մեծ բակին և գաւիթին մէջ, նախագահութեամբ Դեր. Տ. Տիրան Ս. Եպս. Ներսոյեանի։

● 12 Ապրիլ Բշ. — Մեռելոց. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։ Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Մայր Տաճարին մէջ և ապա թափօրական գնացքով դէպի Երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Ս. Պատրիարք Հօր գերեզմանը, հին կրատան գերեզմանները և ապա Զամ-Թաղի գերեզմանատունը, կատարուեցան յատուկ հոգեհանգստեան պաշտամունքներ։

● 14 Ապրիլ Ուր. — Կէսօրէ առաջ, ժամը 10.30ին, Դեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տ. Հայկ Փէլթէկեանի պաշտօնական այցելութիւն տուաւ Յորդանանի կառավարութեան Նորընտիր Վարչապետ Սայիտ Փաշա Մուֆթիին։

● 15 Ապրիլ Շբ. — Յեսմիջօրէի, ժամը 6ին, Ս. Աթոռ ժամանեց Դեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեան։

● 16 Ապրիլ — Նոր Կիրակի. — Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին

digitised by A.R.A.R.@

մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։ Քարոզեց Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, նիւթ ունենալով Ա. Համաշխարհային պատերազմին մեր բիւրաւոր նահատակներուն յիշատակը, որոնց համար յետ Ս. Պատարագի կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստեան պաշտամունք։

● 17 Ապրիլ Բշ. — Դեր. Տեղապահ Հայրը այս առտու վանական գործերով Ամմանէն մեկնեցաւ դէպի Եգիպտոս։

● 18 Ապրիլ Գշ. — Յետմիջօրէի ժամը 4ին, ի դիմաց Դեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի, մեկնեցան դէպի Երուսաղէմի մօտակայ Բեթանիա գիւղը դիմաւորելու համար Ն. Վեհ. Ապտալլա Թագաւորի Երուսաղէմ մուտքը։

● 19 Ապրիլ Դշ. — Երեկոյեան ժամերգութենէն յետոյ, կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի,

● 20 Ապրիլ Եշ. — Աւետումն Ս. Աստուածածնի. — Նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի հոգեշնորհ վարդապետ հայրեր, առաւօտուն պաշտօնական թափօրով իջան Ս. Աստուածածնի տաճար, ուր «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն ետք Ս. Կոյսի գերեզմանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան։ Քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» բնաբանով։

● 22 Ապրիլ Շբ. — Յետմիջօրէին, վարդապետ հայրեր նախագահութեամբ Դեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի, պաշտօնական երթով իջան Ս. Յարութեան Տաճար։ «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն և Ս. Գերեզմանի ուխտէն յետոյ թափօրը բարձրացաւ Բ. Գողգոթայի վերնայարկ մատուռը, ուր պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը, և ապա կատարուեցաւ Քրիստոսի Տնօրինական վայրերու այցելութեան երեկոյեան թափօրը։

● 23 Ապրիլ Կիր. — Աշխարհամատեան. — Առաւօտուն նախագահութեամբ Դեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի հոգեշնորհ վարդապետ հայրեր հանդիսաւոր երթով իջան Ս. Յարութեան Տաճար։ Բ. Գողգոթայի մատրան մէջ, առաւօտեան ժամերգութենէն յետոյ՝ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։ Դեր. Տ. Ռուբէն Ս. Հայրը պատարագեց և քարոզեց Յարութեան խորհուրդին շուրջ։

● 30 Ապրիլ Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի մատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

Ս. ՋԱՏԿԻ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Երանաշնորհ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարք Հօր մահուան սուգին պատճառով, այս տարի զանց առնուեցան զանազան յարանուանութեանց Ս. Ջատկի շնորհաւորական այցելութիւնները։

Ընդունուած են միայն հետեւեալ շնորհաւորական այցելութիւնները տրուած Դեր. Տեղապահ Հօր պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ։

● 10 Ապրիլ Բշ. — Անկլիքան Եկեղեցւոյ Եպիսկոպոս Դեր. Տ. Ստուարթ, Լուտերական Եկեղեցւոյ ներկայացուցիչ Տօք. Մոլ, Տիար Ց. Մելիքեան և Տքթ. Քանաան, Երուսաղէմի Մութասարիֆ Վսեմ. Իսան Պէկ Հաշիմ, ի դիմաց Երուսաղէմի Աւագ Քարտուղարին՝ Ս. Տեղեաց Քարտուղար Տիար Նահիպ Պալարշի, Երուսաղէմի Ընդհ. Ոստիկանապետ Ռատի Պէյ Ուննապ։

● 11 Ապրիլ Գշ.— Բրիտանական Ընդհ. Հիւպատոս Սըր Հիւ Տաու, Երուսաղէմի Քաղաքապետ Անուէր Պէկ էլ-Խաթիպ, Միացեալ Նահանգաց ընդհ. հիւպատոսը։

— Յաջորդող օրերուն, Դեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Պր. Կարպիս Հինդլեանի փոխադարձեց, Անկլիքան Դեր. Եպիսկոպոսին, Անգլիական և Ամերիկեան Վսեմ. Հիւպատոսներուն այցելութիւնները։

Ս. ՋԱՏԿԻ ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաղեստինի քաղաքական անստոյգ կացութիւնը ինչպէս նախորդ երկու տարիներուն այս տարի ևս արգելք եղաւ որ ունենայինք ուրիշ տարիներու Ջատկական բազմամարդ ուխտաւորութիւնը։ Մօտ հարիւրեակ մը ուխտաւորներ ունեցանք այս տարի, եկած Պոլսէն, Ամերիկայէն, Սուրիայէն, Լիբանանէն և Արեւելեան Յորդանանէն։ Ուխտաւորներու բացը կը դարմանէր բարեպաշտ երուսաղէմահայութիւնը, որոնք լեցուցին խուռներամ բազմութեամբ մեր տաճարները բոլոր հանդիսական առիթներուն ալ։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@